Կ Ա Ր Ծ Ի Ք

ԼՈՒԻԶԱ ԻՎԱՆԻ ՄԱՐԱԲՅԱՆԻ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ

Ժ. 02.07 – «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեզուն համարվում է քաղաքական համակարգի կառավարման կարևորագույն գործիք , և այս առումով քաղաքականությունը հաղորդակցության վրա հիմնված արվեստ է: Մեր օրերում կին և տղամարդ քաղաքական առաջնորդների միջև հավասարության գաղափարը հիմնարար է: Քաղաքական կյանքում նրանք ունեն նույն իրավունքներն ու հնարավորությունները: Սակայն տարբեր երկրներում գենդերային հավասարությունը դրսևորման տարբեր մակարդակներ ունի:

Հասարակական կյանքում կնոջ և տղամարդու աշխարհընկալման տարբերությունները մշտապես արժանացել են հատուկ ուշադրության հոգեբանների և հասարակագետների կողմից, սակայն լեզվի և հաղորդակցության գենդերային հայեցակերպի հետազոտումը դեռևս մնում է ամենաքիչ ուսումնասիրված բնագավառը:

Լուիզա Մարաբյանի աշխատանքը նվիրված է ժամանակակից լեզվաբանության մեջ այսօր արդեն լայնորեն ուսումնասիրվող մի թեմայի՝ լեզվում գենդերային տարբերությունների հիմնախնդրին, որի կարևորությունը անկիայտ է: Հաճախ միջանձնային շփումը դուրս է գալիս հաղորդակցությանը բնորոշ նորմերից և ստանում ագրեսիվ բնույթ: Ինչպես հասնել միջսեռային հաղորդակցության և փոխըմբռնման

բարելավմանը: Այս խնդրով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ ուշադրություն է դարձվում ագրեսիա արտահայտելու միջոցների ուսումնասիրությանը: Այս խնդրի նկատմամբ հետաքրքրության աճը բացատրվում է նրանով, որ ագրեսիա երևույթն առանձնանում է իր միջգիտակարգայնությամբ:

Լեզվաբանության մեջ ագրեսիայի ուսումնասիրությունը սերտորեն կապված է հասարակագիտական և հոգեբանական ասպեկտների հետ: Հետևաբար, Լուիզա Մարաբյանի աշխատանքի նորույթը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն, քանի որ այն միջգիտակարգային է, որն ենթադրում է նյութի համալիր դիտարկումը հանրամշակութաբանության, գենդերային լեզվաբանության, խոսույթի տեսության, մասնավորապես քաղաքական խոսույթի, և հաղորդակցման տեսության տեսանկյուններից:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան՝ լեզվական, ոչ լեզվական և հարալեզվական միջոցներով ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների քննությունն է կին և տղամարդ քաղաքական գործիչների հեռուստաբանավեճերում:

Աշխատանքը նպատակ ունի լուծել մի շարք գործնական ու տեսական խնդիրներ և այս առումով, անշուշտ այն խրախուսելի է հասարակական և միջմշակութային կապերի զարգացման արդի փուլում, երբ այնպիսի երևույթի հանդեպ, ինչպիսին գենդերն է, ակնհայտ հետաքրքրություն կա:

Ատենախոսը կիրառել է հանրալեզվաբանության, հանրամշակութաբանության, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության և վիճակագրական մշակման մեթոդները՝ դիտման, համեմատման, ճանաչման, չափման, վերլուծության, որոնք հնարավորություն են ընձեռում վեր հանելու հեռուստաբանավեճերում առկա գենդերային հասկացության բազմաշերտ կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորույթը, որոշարկվում ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, տեսական և գործնական արժեքը:

Ատենախոսության առաջին գլխում ատենախոսը ներկայացնում է գենդերային տեսության և հաղորդակցության հիմնախնդիրները քաղաքական խոսույթում, ներկայացնում է հետազոտության տեսական դրույթները, կանանց և տղամարդկանց վարքագծի առանձնահատկությունները քաղաքական խոսույթում, ինչպես նաև գենդերային կարծրատիպերը քաղաքական հեռուստաբանավեճերում:

Անդրադառնալով կարծրատիպերին՝ հեղինակը բնորոշումէ դրանց որպես կանանց և տղամարդկանց վարքի չափանմուշներ, որոնց շնորհիվ ստեղծվում է կանանց և տղամարդկանց միջև բարոյական փոխհարաբերությունների տեսակ, որը բնորոշ է տվյալ մշակույթին:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է «Ագրեսիայի դրսևորման գենդերային առանձնահատկությունները քաղաքական բանավեճում», հեղինակը ներկայացնում է գենդերային ագրեսիան որպես սոցիալական վարքի տարատեսակ, ինչին հաջորդում են այդ վարքը պարզաբանող օրինակները հեռուստաբանավեճերում: Հեղինակը քննում է կին և տղամարդ քաղաքական գործիչների ագրեսիվ խոսքային վարքի առանձնահատկությունների լեզվական (շարահյուսական, ոճական, ձևաբանական) և բառային միջոցների դրսևորումները ամերիկյան հեռուստաբանավեճերի բովանդակային վերլուծության հիման վրա: Ատենախոսը քննության է ենթարկում նաև պայմանական նախադասությունները, որոնք ստեղծում են հակասություն՝ ընդգծելով առաջարկների դրական արդյունքներն ընդդեմ հակառակորդի ծրագրերի բացասական հետևանքների:

Երրորդ գլխում, որն ատենախոսը վերնագրել է «Խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային ագրեսիայի դրսևորումները քաղաքական հեռուստաբանավեճերում», շեշտադրվում է գենդերային անհատի խոսքային ագրեսիայի արտահայտչամիջոցները քաղաքական հեռուստաբանավեճերում և ագրեսիվ ոչ խոսքային, և հարախոսքային վարքի գենդերային բնութագրերը: Ատենախոսը քննում է տարբեր երկրներում և

մշակույթներում քաղաքական հեռուստաբանավեճերի ժամանակ «ատելության խոսք» պարունակող տարատեսակ ձևեր, մասնավորապես՝ գռեհիկ բառերի գործածություն, վիրավորական և հեգնական հարցադրումներ, ծաղրանք, ցինիզմ, քննադատություն, սպառնալիք: Հեղինակը նկատում է, որ քաղաքական բանավեճերում ոչ խոսքային միջոցներ կիրառելիս շեշտը հիմնականում դրվում է դիմախոսության և ժեստերի նկարագրման վրա:

Աշխատանքի առավելությունն այն է, որ ատենախոսությունն աչքի է ընկնում լեզվում գենդերային տարբերությունների արտացոլման համակողմանի ուսումնասիրությամբ, որը կատարվել է տարբեր մակարդակներում *(խոսքային, ոչ խոսքային, հարախոսքային)* և տարբեր գիտակարգերի, մասնավորապես՝ հանրալեզվաբանության, մշակութաբանության, գենդերային լեզվաբանության տեսական մոտեցումների լույսի ներքո, որոնք առավել հիմնավորված և համոզիչ են դարձնում հետազոտության լեզվական կողմին առնչվող դրույթները:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության արդյունքները:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. էջ 5 - ում հեղինակը դիտարկում է ագրեսիվ վարքագիծը լեզվական տարբեր մակարդակներում՝ բառային, ձևաբանական, շարահյուսական և ոճական: Միգուցե ոճական լեզվական մակարդակի մասին խոսելիս հեղինակը նկատի ունի տեքստայի՞նը:
2. էջ 84 - ում հեղինակը առանձնացնում է ուժեղ suspended, shut down, informed բայերը : Ըստ անգլերենի քերականության ուժեղ բայերն անկանոն բայերն են, իսկ թույլ բայերը ՝ կանոնավորներն են: Ներկայացված բայերի ցանկում կան և կանոնավոր, և անկանոններ: Այնուհետև էջ 88-ում հեղինակը օգտագործում է նաև ուժգնացող բայեր եզրույթը: Ո՞րն է դրա անգլերեն համարժեքը:
3. Ատելության խոսքը վերլուծելիս հեղինակը որպես օրինակ է բերում քաղաքական գործիչների կողմից օգտագործվող անպարկեշտ բառապաշար: Ընդունում եմ, որ

հայհոյանքը ատելության խոսքի դրսևորում է, բայց արդյո՞ք արժե՞ր անդրադառնալ դրան գիտական ատենախոսության մեջ:

4. Հեղինակը որպես ատելության խոսքի օրինակներ բերում է մոլդովերեն և ֆրանսերեն քաղաքական խոսույթներից: Որքանո՞վ է թարգմանությունն արտացոլում բնագրի ոճական և բառային առանձնահատկությունները:
5. Աշխատանքում նշվում է, որ խոսողի հուզագնահատողական վիճակը ուժգնացնելու համար կիրառվում է "so" մասնիկը: Ատենախոսի պնդմամբ ուժգնացնող բառի այսպիսի կիրառությունը բնորոշ է կանանց խոսքին: Արդյո՞ք տղամարդիկ այն չեն կիրառում:

Լուիզա Մարաբյանի ատենախոսությունը արդիական է թե՛ ուսումնասիրության առարկայի, թե՛ ընտրված մեթոդաբանության առումով: 21-րդ դարը կանանց նոր հնարավորություններ է տալիս՝ մարտահրավեր նետելու հաստատված կարծրատիպերին և փոխելու վերաբերմունքը թե՛ իրենց, թե՛ շրջապատի նկատմամբ: Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ: Ատենախոսությունը աչքի է ընկնում նյութի խորը ուսումնասիրությամբ և իմացությամբ, շարադրանքի հստակությամբ, գիտական խորքային վերլուծությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Արմինե Սիմոնյան

բ.գ.դ. պրոֆեսոր, Ռուս-հայկական համալսարանի
լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ

Հաստատում եմ՝
Գիտքարտուղար,
բ.գ.թ.՝ Ռ.Ս. Կասաբաբովա